

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

23.07.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ
Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա.Բեջանյանը, Ս.Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Օհանյանը, Ա.Աղլոյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Եղիազարյանը, Վ. Դոխոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ղամբարյանը - մարզպետի խորհրդական
Գ.Սաղաթեյանը - մարզպետի օգնական
Մ.Կիրակոսյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ձեկ.Նարեկ Սարգսյան/
2. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին
/Ձեկ.Արամ Խաչատրյան, Անդրեյ Ղուկասյան, Սերգեյ Սարուխանյան/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ձեկ.Արտավազ Բեջանյան/
4. Լոռու մարզի 2018թ. աշխատանքային գործունեության ծրագրի 1-ին կիսամյակի մոնիտորինգի մասին
/Ձեկ.Հասմիկ Մկրտչյան/
5. 2018թ. հուլիսի 17-ից 18-ը Վանաձորում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպվող անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 27-րդ մարզական խաղերի վոլեյբոլ, ձեռքի գնդակ և սեղանի թենիս մարզաձևերի հանրապետական եզրափակիչ փուլերի արդյունքների մասին:
/Ձեկ.Արփիինե Մատինյան/
6. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին:
/Ձեկ.Գրիգոր Հակոբյան/
7. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Մարզի համայնքներ և մարզային ենթակայության կազմակերպություններ աշխատանքային այցելություններ կատարելուց առաջ այցերի նպատակի և լուսաբանման համար նախօրոք տեղեկացնել աշխատակազմին և վերադաս ղեկավարությանը:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին և ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և վերահսկել սեփական եկամուտների հավաքագրման (մասնավորապես Վանաձոր քաղաքի) պլանային ցուցանիշների կատարման ապահովումը:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Արտաքին կապերի բնագավառում, Լոռու մարզի համայնքներում և կազմակերպություններում իրականացվող ծրագրերի և կատարված քննարկումների վերաբերյալ տեղեկացնել մարզպետի խորհրդականներին ու հնարավորության սահմաններում ընդգրկել նշված գործընթացներում:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Լոռու մարզի 2018թ. աշխատանքային գործունեության ծրագրի 1-ին կիսամյակի մոնիտորինգի հիման վրա անհրաժեշտության դեպքում վերանայել տարեկան աշխատանքային պլանի ցուցանիշները, ճշգրտել և ներկայացնել՝ համապատասխան փոփոխություն կատարելու նպատակով:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ